ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02

ք.Երևան «10» «հունվար» 2022թ.

Վարչապետի աշխատակազմն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ.Բոշյանի, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության ռեկտոր Խ.Ղազեյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի, 04 խմբի, 02 դասի «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի «12002. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կատարողին հատկացնել Որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով մինչև 43 740 000 (քառասուներեք միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, իսկ Կատարողը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կագով:

1.2. Ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում Կատարողը ստանձնում է հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու պարտավորությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցները հատկացնել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով

2.1.2 Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինիս գործունեությանը:

2.2.2. Կատարողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1.Ապահովել սույն պայմանագրի 1.2 կետում նախատեսված պարտավորությունների իրականացումը:

2.3.2. Պատվիրատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման, կատարման և միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ պահանջվող տեղեկատվություն:

2.3.3. Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություններ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 8-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը:

2.3.4. Հաշվետու տարվա վերջում Ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Պատվիրատուին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Պատվիրատուն վճարում է Կատարողին ամսական կտրվածքով՝ նրա կողմից ներկայացված գրավոր պահանջի հիման վրա:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2022 թվականի հունվարի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

5.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Հանրապետության	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8
հրապարակ, Կառավարական տուն, 1	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900018005646
Հ/Հ 900011018398	ՀՎՀՀ 00035088
ՀՎՀՀ 02505554	

Կ.Տ. Կ.Տ.